Doi: 10.56737/2953-7843-2023.06-95

ԱՆՆԱ ՕՆԱՆՅԱՆ

ՄԱԼՂԱՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԲ. ԹՈՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՒՅՔԻ ՀԵՏԱԳԱ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ[1]

1. Դարերի ընթացքում չունենալով պետականություն՝ հայերն ապրել եւ ստեղծագործել են օտար հողում եւ փաստորեն՝ այդ հողում են թողել իրենց ազգային գանձերը։ Այդպիսի մի ճակատագիր հայերն ունեցել են Մալղարայում (Մալգարա, Մալկարա)։ Այժմյան Թուրքիայի Թեքիրդաղի շրջանի բուլղարական այս բնակավայրն անցել է պատմական դժվար ճանապարհ։ Բուլղարիան ԺԴ.–ԺԹ. դարերին կազմել է Օսմանյան կայսրության մաս, որտեղ դարեր շարունակ սուլթանները վերաբնակեցնում էին մուսուլմանների, որպեսզի կանգ առնի տեղացիների ժողովրդագրական աճը[2]։ Այս քաղաքական խառնաշփոթ իրավիճակում ապրում եւ ստեղծագործում էին հայեր։

Սույն զեկուցման նպատակն է.

1. ներկայացնել Մալղարայի հայերի գանձերը՝ մասնավորապես Սբ. Թորոս եկեղեցու գույքը,

2. փորձել հասկանալ այդ գույքի ճակատագիրը,

3. ներկայացնել հրաշքով Հայաստանում հայտնված նմուշները, դրանց գեղարվեստական արժանիքները. այնպիսի նմուշներ, որոնք թանգարանը չի նույնականացրել եւ չգիտի դրանց ծագման վայրը։

Պատմական տեղեկությունների համաձայն՝ հայերը 1600–1608 թթ. ընթացքում հաստատվեցին Կ. Պոլսում, Լեհաստանում, Ռումինիայում, այդ թվում՝ Մալղարայում։ Նրանք Կամախի, Երզնկայի, Սեբաստիայի, Կեսարիայի հայերն էին, որոնք սկզբում գաղթել էին Ռոդոսթո, ապա միայն Մալղարա, Զոռլու, Սիլիվրի փոքր բնակավայրեր։ Մալղարայի բնակիչները Ռոդոսթո քաղաքի հոգեւոր ենթակայության տակ էին, քանի որ վերջինս առաջնորդանիստ քաղաք էր։ Հայերն իրենց հետ բե-

---

[1]* *Ստացվել է՝ 20.04.2023, գրախոսվել է՝ 29.04.2023։ Էլ. հասցե՝* annaonanyan88@mail.com։

[2] Վ. Հակոբյան, *Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի մոտեցումները Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության հիմնահարցերի նկատմամբ* 1878–1944 թթ., *Երեւան, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2016, հտ. 2, էջ 94։*

րել էին Սբ. Թորոսի մասունքով խաչ, Աստվածածնի պատկեր եւ մեկ ձեռագիր Ավետարան[3]։ Մալղարա անվանումն ունի թուրքական ծագում, ժողովուրդը մեջ երբեմն անվանում է Մալկարա։ Գտնվում է Ռոդոսթոյից 57 կմ դեպի հյուսիս-արեւմուտք։ Բաղկացած էր երեք թաղամասից, որից հյուսիսարեւելյանը հայերինն էր, ապրում էին նաեւ հույներ եւ թուրքեր։ ԺԹ. դարի սկզբում 10 հազար բնակչից 3500-ը հայեր էին, իսկ դարավերջում բնակչության մի մաս էին կազմում նաեւ բուլղարացիները[4]։

Հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել տեղացիների մասին։ Գաղթածների մի խումբն Էրմենի Քյոյ գյուղից էր, որոնց մեջ կար Ավագ անունով դերձակ։ Այս արհեստը ժառանգաբար փոխանցվեց մի քանի դար, նույնիսկ վերջերս տապանաքար է հայտնաբերվել դերձակի գործիքներով։ Մալղարան հիմնադրվել է Բյուզանդիայի ժամանակներում, իսկ 1357 թվականին այն գրավել են թուրքերը։ Մալղարա անվանումն առաջին անգամ հանդիպում է 1632 թվականին։

1919–1922 թթ.՝ հույն-թուրքական պատերազմներից հետո, Մալղարայում եւ Ռոդոսթոյում ապրող հայերին սպառնում էր կոտորածի վտանգ։ 1922 թ. բուլղարահայ գաղութն սկսեց միջոցներ ձեռնարկել հայերին ապաստանելու ուղղությամբ, որոնք մեծ խմբերով տեղափոխվում էին Պլովդիվ, Վառնա, Բուրգազ, Այտոս, Սլիվեն[5]։ 1922 թվականին անհրաժեշտություն առաջացավ նաեւ կազմակերպելու հայկական եկեղեցական գույքի տեղափոխումը, մանավանդ որ «Պուլկար կառավարությունը վեհանձնօրէն բարեհաճած է հայ գաղթականները ընդունելու իր երկրին մէջ»։ Ինչպես հայտնում է Վարդան Խոշիկյանը, Հարություն Փափազյան անունով մի «լուսավոր» մարդ 2 օգնականների հետ այդ գույքը թաքցրել էր եկեղեցու անկյունում, եւ պատերազմի ավարտից հետո դրանք կրկին օգտագործվեցին եկեղեցում։ Այնուհետեւ մոտակայքում գտնվող Քեշան գյուղաքաղաքի եկեղեցում օգտագործվելու համար թաղականության խնդրանքով որոշ եկեղեցական սպասք Մալղարայից տեղափոխվում է Քեշան։ Հարություն Փափազյանի ջանքերով գաղթի ժամանակ Քեշան գյուղաքաղաքին տրամադրված գույ-

---

[3] Վ. ԽՕՇԻԿԵԱՆ, *Մալկարայի հայ գաղութը (1610–1922 թուական), 1943, էջ 20։*

[4] *Անդ, էջ 11։*

[5] Զ. ՂԱՍԱԲՅԱՆ, *Հայ գաղթականների ընդունումը եւ բնակեցումը Բուլղարիայում 1922–1923, «Բանբեր հասարակական գիտությունների», 1974, թիվ 1, էջ 22–23։*

քը տեղափոխվում է Պլովդիվի եկեղեցի[6]։ Սբ. Թորոս եկեղեցու գույքի մյուս մասը Մալղարայի վարժարանի տնօրեն Հարութիւն Փորաճյանի կառքով ճանապարհում են Պոլսի առաջնորդարան։ Այս կառքն ուղեկցում էր Վարդան Խոշիկյանը։ Գույքի մեծ մասը դեռ Մալղարայում էր։ Ռոդոսթոյից ուղարկված 2 բեռնատար ինքնաշարժիչները պիտի տեղափոխեին մյուս մասը, սակայն երկու «անամոթներ» օգտագործում են տեխնիկան իրենց անձնական գույքը տեղափոխելու համար։ Մալղարայի եկեղեցու գանձերի այդ մնացած մասը բաժին է ընկել թուրքերին՝ որպես ավար։

Վարդան Խոշիկյանը ներկայացրել է Պլովդիվի Սբ. Գեւորգ եկեղեցու գանձատանն *ապաստան գտած եկեղեցական գույքի ցուցակը, որը սիրով տրամադրել էր «բանասէր Տիար Ներսէս Գասապեանը»։ Գույքացուցակը ներկայացրել ենք հավելվածում։*

Մենք, իհարկե, փորձեցինք գնալ Վարդան Խոշիկյանի գույքացուցակի հետքերով։ 12-րդ կետի՝ «Տպագիր Աւետարան, որը տպագրուել է Յոհաննէսի եւ Յակոբու տպարանում, 1218 թ. (1769) մայիսի Գ», փնտրման արդյունքում 3 օրինակ գտնվեց Հայաստանի ազգային գրադարանում, իսկ 5 օրինակ՝ Մաշտոցյան Մատենադարանում։ Յավոք, ոչ մի օրինակի նվիրատվության կամ ձեռքբերման աղբյուրը չէր համապատասխանում մեր փնտրմանը։ Վարդան Խոշիկյանը Ներսես Գասապյանի տրամադրած ցուցակի վերջում ներկայացրել է այս Ավետարանի հիշատակարանը՝ նշելով, որ արտագրել է «Հանդէս Ամսօրեայի» 1938 թվականի համար 4–8-ից[7]։

Յուցակի 14-րդ կետի՝ «Խորհրդատետր, 1841 թ. տպագրվել է Երուսաղեմում», երկուական օրինակ կար Մաշտոցյան Մատենադարանում, Ազգային գրադարանում եւ Գիտությունների ակադեմիայի հիմնարար գրադարանում. դարձյալ նվիրման մանրամասները չհամընկան մեր որոնման հետ։

Շուրջ 5 տասնյակ այս գանձերից որոշներն ունեն բավականին մանրամասն նկարագիր, ինչը հնարավորություն կտար գտնելու դրանք տարբեր թանգարաններում։ Տարբեր թանգարաններին արված հարցումներն անցան ապարդյուն, քանի որ Մալղարայից բերված ոչինչ

---

[6] Վ. ԽՕՇԻԿԵԱՆ, *Մալկարայի հայ գաղութը (1610–1922 թուական), էջ 93–94։*

[7] *«Յիշատակարանը» տե՛ս Ժէ. դարի «Յիշատակարանք», Գ., էջ 689–91, համ. 1050։ Տե՛ս նաեւ* Ն. ԳԱՍԱՊԵԱՆ, *Յուցակ հայերէն ձեռագրաց ի Բուլգարիա, Վենետիկ, 1981, էջ 41–43։*

չգտնվեց թանգարանային հավաքածուներում։ Անձնական հետազոտության արդյունքում հնարավոր եղավ նույնականացնել Վարդան Խոշիկյանի ներկայացրած ցուցակից համար 23-րդը՝ սկիհի ծածկոցը։

Այն պահվում է էջմիածնի Ալեք եւ Մարի Մանուկյանների անվան գանձատանը։

Դեղին մետաքսե կտորի վրա ոսկեթել, արծաթաթել ասեղնագործությամբ կլոր ծածկոց է (նկար 1)։ Ունի հարուստ հարդարանք, ներկայացնում է դրվագներ Քրիստոսի կյանքի պատմությունից։ Կենտրոնում ճաճանչավոր շրջանակի մեջ Խաչելության տեսարանն է։

Խաչելության պատկերից ներքեւ՝ աջ կողմում, Տիրամոր ավետման տեսարանն է։ Տիրամայրը աջ կողմից է՝ գլուխը մի փոքր առաջ խոնարհած, համեստ։ Մանրամասն մշակված են զգեստի ծալքերը, դիմագծերը։ Պատվանդանից ձախ պատկերված է հրեշտակը. մի ձեռքին ծաղիկ է, մյուսով օրհնում է։ Հրեշտակն ամպերի վրա է կանգնած։ Ավետման տեսարանի վերեւում պատկերված է Սուրբ Հոգին։

Նույն ուղղությամբ դեպի վերեւ՝ Խաչելության տեսարանի վերին աջ կողմում, Ծննդյան տեսարանն է։ Տիրամայրը պառկած է ամպհովանու տակ, իսկ Քրիստոսը՝ խսիրին, ձախ կողմում երեք հրեշտակներ են։

Հաջորդ տեսարանը, որն արդեն Խաչելության տեսարանի ուղիղ վերեւում է, Հոգեգալուստն է։ Ճիշտ փոխանցված է բազմամարդությունը, համաչափությունը, ամեն ինչ մանրամասն մշակված է՝ անգամ աթոռակները։ Վերեւից տեսարանի վրա իջնում են Սուրբ հոգու շնորհները՝ լույսի ճառագայթները։

Հոգեգալստին հաջորդում է Հարության տեսարանը։ Հստակորեն երեւում է, որ պատկերագրության մեջ պահպանված չէ ժամանակագրական հաջորդականությունը։

Հարության տեսարանից հետո Մկրտության տեսարանն է։ Քրիստոսը գետի մեջ է, Հովհաննես Մկրտիչն ավելի բարձր է պատկերված։ Ձախ կողմում սրբիչը պահած հրեշտակն է, իսկ վերեւում աղավնին է ու ամպերի միջից նայող Հայր Աստծո կերպարը։ Հայր Աստվածը եռանկյունաձեւ լուսապսակով է՝ ձեռքերը դեպի կողք տարածած։

Մկրտությունից հետո, այսինքն՝ Խաչելության տեսարանի անմիջապես ներքեւում, տեսնում ենք Խորհրդավոր ընթրիքը։ Կենտրոնում պատկերված է Քրիստոսը, իսկ շուրջը 11 առաքյալներն են։ Հետաքրքիր մեկնաբանություն ունի տեսարանը. բոլորը նայում են մեկ ուղղությամբ,

եւ դա ամենեւին էլ դիտողը չէ։ Բոլորի լուսապսակները ոսկեթելով են ընդգծված, իսկ մազերը եւ դիմագծերը՝ մուգ երանգի մետաքսաթելով։ Ամենայն մանրամասնությամբ են ասեղնագործված անգամ աթոռների ոտնակները, առաքյալների ձեռքերը։ Վերեւից իջնում է աղավնակերպ Սուրբ Հոգին։

Եւ չնայած ծածկոցը բավականին վառ դեղին կտորից է, միեւնույն է, ոսկեթելի օգտագործումն արտահայտիչ է դարձնում տեսարանները։ Ոսկեթելի եւ դեղինի վառվռունությունը կոտրում են արծաթաթելը եւ սեւ մետաքսաթելը։ Ծածկոցի եզրային հատվածով արձանագրության գոտին է, ապա՝ պարզ զարդագոտին, իսկ եզրերում ծոպեր ունի։

Ծածկոցի ստեղծման թվականը գրված է արձանագրության մեջ՝ 1810 թվական[8]։

2008 թ. «Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում» պատկերազարդ հրատարակության մեջ, որի կազմողն այն ժամանակ քահանա Ասողիկ Կարապետյանն է (այսօր՝ աբեղա), 77-րդ էջում տեսնում ենք վերոնշյալ ծածկոցը՝ «1810 թ., Արեւմտյան Հայաստան» ուղեկցող գրությամբ[9]։

Այստեղից կարող ենք հետեւություն անել, որ անգամ թանգարանին հայտնի չէ սկիհի ծածկոցի ծագման վայրը։ Ինչպես վերը նշեցինք, գույքի մի մասը հայտնվել է Պլովդիվի Սբ. Գեւորգ եկեղեցում, մյուս մասը՝ Պոլսի առաջնորդարանում։ Քանի որ Խոշիկյանի ներկայացրած ցուցակը Պլովդիվում հայտնված գույքինն է, ավելի է հեշտանում դրա հետագա ճակատագրի բացահայտումը։

Այստեղ մեզ օգնության է հասնում Սարգիս Փաչաճյանը, որը ներկայացրել է Ռոդոսթոյի պատմությունը։ Արդեն ասացինք, որ Ռոդոսթոն առաջնորդական թեմի կենտրոնն էր, որին ենթակա էին Զորլու, Տարտանել, Մալղարա, Էզինե, Սիլիվրի, Կալիփոլի քաղաքները[10]։ Գաղթի ժամանակ Ռոդոսթոյի հայերն իրենց եկեղեցական գույքը 13 սնդուկներով մեծ դժվարությամբ տեղափոխում եւ «Յովհաննեան» հայրենակցական միության հսկողության տակ տեղավորում են Սբ. Գեւորգ եկեղեցում (նկար

---

[8] *Տե՛ս Մալղարայի Սբ. Թորոս եկեղեցու գույքի Ցուցակը (թիվ 23)։*

[9] *Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում, կազմեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը, Էջմիածին, 2008, էջ 77։*

[10] Ս. Փաջաճեան, *Յուշամատեան Ռոտոսթոյի հայերուն, 1606–1922, երկրորդ եւ լրացեալ հրատարակութիւն, Պէյրութ, 1971, էջ 176։*

2)։ Այս իրադարձության մասին ֆիլմ է նկարահանվել՝ «13 սնդուկների հիշողությունը»։

Փաչաճյանը ներկայացրել է բոլոր 13 սնդուկների պարունակությունը։ Դրանք Ռոդոսթոյի Սբ. Խաչ, Սբ. Թագավոր, Սբ. Փրկիչ եկեղեցիներից էին։ Ըստ այդ ցուցակի՝ 13 սնդուկներում եղել է 1662 կտոր իր՝ այդ թվում գորգեր, կարպետներ, վարագույրներ, սեղանի, գրակալի, ավետարանի, սկիհի ծածկոցներ, ուրարներ եւ փորուրարներ, շուրջառներ, վակասներ, բազպաններ, հողաթափեր, սրբիչներ, սկիհներ, աշտանակներ, բուրվառներ, մեռոնի աղավնիներ, արծաթյա սպասք։

«Այս 13 սնտուկներէն 7 հատը եւ 100 քիլոկրամ արծաթեղէն 1947-ին «ԵՐԵՒԱՆ» Միութեան Կ. Կոմիտէի եւ Թեմական Խորհրդի որոշմամբ, ուղարկուեցան էջմիածին՝ ուր մեծ կարիք կար եկեղեցական հանդերձանքի եւ սպասներու»[11]։

Վստահաբար չենք կարող ասել, թե արկղերից որոնք են հասել Երեւան, սակայն հստակ է, որ դրանք պարունակում էին ոչ միայն Ռոդոսթոյի, նաեւ մյուս փոքր բնակավայրերի գույքից մի մաս։ Դրանով էլ բացատրում ենք Մալղարայի սկիհի ծածկոցի հայտնվելը Հայաստանում՝ էջմիածնում։

Այսպիսով՝ այժմյան Թուրքիայի Թեքիրդաղի շրջանի բուլղարական բնակավայր Մալղարան բնակեցված է եղել հայերով, որոնք ապրում եւ արարում էին այստեղ մինչեւ Ի. դարի սկիզբը։ 1922 թ. հայերն սկսեցին զանգվածաբար հեռանալ Մալղարայից։ Սբ. Թորոս եկեղեցու գույքի տեղափոխման խնդիր առաջացավ։ Մենք, իհարկե, չգիտենք 1922 թվականի դրությամբ եկեղեցու գույքի հստակ քանակը, միայն գիտենք, որ այն մաս-մաս տեղափոխվեց։ Մի մասը Քեշան գյուղաքաղաքին տալուց հետո տեղափոխվեց Պլովդիվ, մյուս մասը՝ Կ. Պոլսի առաջնորդարան, իսկ երրորդ մասը, ցավոք, դարձավ թուրքերի ավար։ Գրավոր աղբյուրներում պահպանվել է միայն Պլովդիվ տեղափոխված գույքի (այդ թվում՝ վակասներ, սկիհի եւ սեղանի ծածկոցներ, ավետարաններ, ձեռաց խաչեր եւ այլն, ընդհանուր՝ 5 տասնյակ իր) ցուցակը։ Ցուցակի 23-րդ համարի սկիհի ծածկոցն այժմ Հայաստանում է՝ էջմիածնի Ալեք եւ Մարի Մանուկյանների գանձատանը։ 1922 թվականին Ռոդոսթոյի Սբ. Խաչ, Սբ. Թագավոր, Սբ. Փրկիչ եկեղեցիների գանձերը եւս 13 արկղով տեղա-

[11] Անդ, էջ 229։

փոխել էին Պլովդիվի Սբ. Գեւորգ եկեղեցի։ Քանի որ 1947 թվականին այդ 13 արկղերից 7-ը մոտ 100 կգ արծաթեղենի հետ ուղարկվել է Հայաստան, ենթադրաբար այդ գույքի հետ է եղել նաեւ սկիհի ծածկոցը Մալղարայից։ Չի բացառվում, որ Մալղարայից այլ իրեր եւս տեղափոխվել են Հայաստան, քանի որ այդ ժամանակ Էջմիածնի եկեղեցին ուներ գույքի եւ սպասքի կարիք։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Յուցակ Մալղարայի Սբ. Թորոս եկեղեցու գոյքի

1. Կենաց փայտ եւ մասունք Սբ. Յովհաննու Կարապետի (միատեղ). ճաճանչ, արծաթեայ, 18 x 36 սմ։ Յիշատակութիւնը՝ «Յիշատակ է սբ խաչս այս սբ Թորոս եկեղեցւոյն որ ի խոշիկի Յակոբ 1522 (1836)։

2. Մասունք Փիլիպոս առաքեալի. արծաթեայ պատուանդանով ոսկեզօծ խաչ, 17 x 35 սմ։ Յիշատակութիւնը՝ «Յիշատ[ա]կ է սբ խաչս Մլղարայու ժողովրդեանն արդեամք Թէֆիրտաղ ի դուռն սբ Յօհաննէսու եկեղեցուն թուին ՌՄԱ. (1752)։ Ըստ բնակիչների բանաւոր վկայութեան՝ խաչը բերուել է Էրմէնի գիւղից։

3. Սբ. Գէորգի աջ մասունքով, արծաթեայ։ Բանաւոր վկայութեամբ՝ բերել է Ռոդոսթոյի առաջնորդ Թադէոս եպիսկոպոսը։

4. Ճաճանչ-խաչ արծաթից, 11,5 x 28 սմ։ «Յ[ի]շ[ա]տ[ա]կ է խաչս էտիրնեցի Մ[ա]հ[տե]սի Գրիգորին ի Մալկ[ա]ր[ա]յու սբ Թէոդորոս եկեղեցւ[ոյ]ն 1833»։ Խաչի վրայ՝ նաեւ Տ[է]ր Ա[ստուա]ծ Յ[իսու]ս Ք[րիստո]ս։

5. Խաչ՝ փայտէ պոչով, արծաթից, 24 x 44 սմ։

6. Ձեռաց խաչ, արծաթ, 6 x 13 սմ, «Յ[ի]շ[ա]տ[ա]կ է սբ խաչըս Յարութին Զորպաճ[ո]յ (Քրիստոնեայի.– *խմբ.*) դուստր Մարիամին ի դուռն սբ Թէոդորոս եկեղեցւ[ոյ]ն»։

7. Ձեռաց խաչ, արծաթ, 8 x 15 սմ, «Յ[ի]շ[ա]տ[ա]կ է սբ խաչըս Թօֆատլը օղլու պարոն Յարութի[ւ]նին ի սբ Թէոդորոս եկեղեցւոյն 1854»։

8. Միտռնի աղաւնի պատուանդանով, արծաթեայ ոսկեզօծ, պահւում է փայտէ պահարանի մէջ։ «Յ[ի]շ[ա]տ[ա]կ է աղաւնիս Մլղարաու սբ Թորոս եկ[ե]ղ[ե]ցուն որ է Մ[ա]հ[տե]սի Մ[ա]լխասի որդի տ[ի]ր[ա]ց[ու] Նիկողոս Ակոբուն թուին ՌՄՃԳ. (1804)»։

9. Սկիհ, արծաթ, 8 սմ տրամագծով, 14 x 21 սմ, «Յ[ի]շ[ա]տ[ա]կ է Սկիհն Թախլաճի որդի Գէորգին կողակցին նորին հոգւ(յ)ն ի թոռն (դուռն) սբ Թորոս եկեղեցու. թուին ՌՄՃԳ. (1804) Յ ապրիլի Մ. (20)»:

10. Սկիհ, արծաթ, 10 սմ տրամագծով, 17 x 28,5 սմ, «Ռօտաստացի Ճինկօզեան Մ[ահտեսի] Աբրահամի կողակից Տիկին Մարիամ նուիրեաց Մալկարայի Ս. Թորոս եկեղեցւոյ»:

11. Ձեռագիր Աւետարան, կողային հատուածը մանուշակագոյն թաշից եւ երկու քանդակներով: 6 x 13 x 19 սմ, ունի 281 թերթ, բնագիրը՝ երկսիւն, տառերը՝ բոլորգիր, լուսանցազարդերով, խորաններով, Մարկոս եւ Յովհաննէս աւետարանիչների նկարներով: 1655 թ. գրուել է Տէր Յովհաննէս քահանայի ձեռքով «Մոկաց երկրում» եւ Մալկարա է բերել Մահտեսի Առաքելը: Ձեռագրի Յիշատակարանը բացակայում էր, այս տեղեկութիւնները հեղինակը կարդացել է ձեռագրի ընդօրինակութեան մէջ:

12. Տպագիր Աւետարան, տպագրուել է Յոհաննէսի եւ Յակոբու տպարանում, 1218 թ. (1769) մայիսի Գ (3):

13. Աւետարան Իւղաբերից, տպագիր, թաշապատ կազմով, սկզբնամասում թաղման տեսարան է պատկերուած, ետնամասում Յարութեան տեսարանն է՝ անկիւններում սերովբէներ:

14. Խորհրդատետր, 1841 թ. տպագրուել է Երուսաղէմում:

15. Ս. Թորոսի պատկեր պաստառի վրայ, որը նոյնանուն եկեղեցու աջ գաւթում է դրուած եղել: Արձանագրութիւնից մի մաս էր կարդացւում. «Քաջամարտիկ Սբ. Թէոդորոս վկայն Ք[րիստո]սի»: 1937 թուականին Փլովդիւ է բերել Արիստակէս Պօղոս Գաշերեանը:

16. Մովկիմա քահանայի պատկեր, «Յ[ի]շ[ա]տ[ա]կ է պատկերս Մալկարայ սբ Թորոս եկղց[ոյ]ն շիմոյի մարտիրոսի որդի ստեփանին ՌՄՀԸ. (1829)»: 1937 թուականին Պլովդիւ է բերել տիկին Ագապի Ուշաքեանը:

17. Ս. Աստուածածնի պատկեր պաստառի վրայ, 24 x 30 սմ:

18. Վարագոյր, 190 x 235 սմ, մետաքս, բերուել է Երուսաղէմից:

19. Սուրբ սեղանի ծածկոց, 95 x 95 սմ, ասեղնագործ՝ արծաթէ եւ ոսկէ թելերով, կենտրոնում խաչ է, շուրջը՝ հրեշտակներ: « Յ[ի]շ[ա]տ[ա]կ է Գոգնոցս սբ. Թորոս եկղւոյն Մ[ա]լկ[ա]ր[ա]յի, էտրնէու՝ ոմանց բարեսէր կանանց»:

20. Սուրբ սեղանի ծածկոց, 90 x 90 սմ, մետքսից, «նկարազարդ» եւ «ծաղկազարդ»: «1911 Յունուար 4 Յիշատակ է օր. Նազենիկ Նշանեանէ»:

21. Ծածկոց սկիհի, 85 x 85 սմ, կարմիր մետաքսէ կտորի վրայ արծաթաթել ասեղնագործութիւն: «Յիշատակ է Թէֆիրտաղցի Տիկին Եղիսաբեթէ. Կարմիրեանի 1896»:

22. Ծածկոց սկիհի, 70 x 70 սմ չափեր ունի, դեղնաւուն մետաքսէ կտորի վրայ արծաթաթել ասեղնագործ: Նուիրել է Տէր Թորոս քահանայ Աճեմեանը:

23. Ծածկոց սկիհի, կլորաւուն, 95 սմ տրամագծով, արծաթապատ դեղնորակ մետաքս, համակ ոսկեթել սիրուն նկարներով, որ ներկայացնում են. կենտրոնում՝ Խաչելութիւնը, եզերին՝ շուրջանակի՝ Աւետում Ս. Կուսին, Ծնունդ Քրիստոսի, Մկրտութիւն, վերջին ընթրիք, Յարութիւն եւ Հոգեգալուստ, ընտիր գործ:

ՀԱՃԻ ԱՆ[Ա]Ն[Ի]Ա[Յ]ԻՆ ԵՒ ՈՐԴ[Ի]ՈՅՆ ԱՅՍԻՆԳՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ, ՅՈՀԱՆՆԷՍԻՆ ԵՒ ՊՕՂՈՍԻՆ. ԵՒ ՆՆՋԵՑԵԼՈՅՆ ՀՈԳԻՈՅ ՈՐ ԵՏ[ՈՒՆ] ՅԻՇԱՏԱԿՍ ԱՅՍ Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ԹՈՐՈՍ ՅԵԿԵՂԵՑ[ԻՈՅ]Ն ՈՐ Ի ՄԱԼՂԱՐ. Թ[Ո]ՒԻՆ ՓՐԿՉԻՆ ՄԵՐՈՅ ՀԱՋԱՐ ՈՒԹՀԱՐԻՒՐ ՏԱՍՆ ԵՒ ՄԵՐՈՅՍ ՌՄԾԹ. ՅԱՄՍԵԱՆՆ ՓԵՏՐՈՒԱՐԻ ՈՒԹԻՆ:

24. Ծածկոց սկիհի, 85 x 85 սմ, դեղնաւուն կտորի վրայ մետաքսէ եւ ոսկէ թելերով ասեղնագործութիւն է: «Յ[ի]շ[ա]տ[ա]կ է Սկիհի ծածկոցս Յարու[թիւն]ի աղայի դուստր Մարիամ տուտուին եւ այր[ոյ]ն Պարոն Մալխասին որ ետ ի կենդանու[թ]ե[ան] իւրում Սուրբ Թորոս եկղց[ոյ]ն ՌՄՁԷ. (1838)»:

25. Ծածկոց սկիհի, կլորաւուն, 75 սմ տրամագծով, կարմիր մետաքսէ կտորի վրայ ոսկեթել ասեղնագործութիւն:

26. Ծածկոց սկիհի՝ 95 x 95 սմ, սպիտակ ցանցկէն կտորի վրայ՝ արծաթաթել ասեղնագործութեամբ. կենտրոնում՝ սկիհ, եզրերին՝ հրեշտակներ: «Յիշեա՛, Տէ՛ր, Կէլիպոլի հանգուցեալ Զինիկ Յակոբ եւ կենդան[ոյ]ս որ Սրբուհի որ ետ յ[ի]շ[ա]տ[ա]կ այս սկիհի ծածկոցս սբ թորոս եկեղեց[ւ]ոյն»:

27. Ծածկոց սկիհի՝ 85 x 85 սմ, սպիտակ ցանցկէն կտորի վրայ արծաթաթել ասեղնագործութեամբ՝ կենտրոնում Աստուծոյ Գառան պատկերով:

28. Ծածկոց սկիհի՝ 100 x 100 սմ, սպիտակ ցանցկէն կտորի վրայ արծաթաթել ասեղնագործութեամբ՝ կենտրոնում Աստուծոյ Գառան պատկերով:

29. Ծածկոց սկիհի՝ կլորաւուն, 60 սմ տրամագծով, կարմիր կտորի վրայ մետաքսաթել ասեղնագործութեամբ:

30. Աւետարանի բռնիչ՝ 100 x 100 սմ ՝ սպիտակ ցանցկէն կտորի վրայ գործուած:

31. Աւետարանի բռնիչ՝ 65 x 65 սմ ՝ սպիտակ ցանցկէն կտորի վրայ գործուած:

32. Աւետարանի բոնիչ՝ նուիրատու դայեակ Եղիսաբէթի:
33. Աւետարանի բոնիչ ցանցկէն կտորից՝ առանց յարդարանքի:
34. Ժամարարի շապիկ, սպիտակ մետաքս:
35. Ժամարարի փոռուրար:
36. Ջոյգ բազպան:
37. Ժամարարի գօտի, թաւշից, արծաթապատ:
38. Գօտի, պարզ:
39. Գօտի, պարզ:
40. Գօտի, պարզ:
41. Սաղաւարտի վակաս:
42. Սաղաւարտի վակաս:
43. Սաղաւարտի վակաս:
44. Սաղաւարտի վակաս:
45. Սաղաւարտի վակաս:
46. Նշխար պատրաստելու կաղապար, տօսախէ:
47. Վէմ-քար, 20 x 20 սմ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Օսմանյան կայսրություն, Բուլղարիա, Ռոդոսթո, Մալղարա, Սբ. Թորոս եկեղեցի, եկեղեցական գանձեր, գույքացուցակ, սկիհի ծածկոց, ասեղնագործություն:

РЕЗЮМЕ

Город Малгара, который находится в регионе Текирдаг в Турции, был населен армянами, которые жили и творили там до начала XX века. В 1922 году армянское население было вынуждено покинуть Малгару. Большой проблемой было спасение сокровищ церкви Св. Тороса. Точного списка утвари Св. Тороса нет, но мы знаем, что она была перемещена частями. Первая часть была сдана накануне в церковь городка Кешан на пользование, после чего отправлена в церковь Св. Георгия в Пловдиве. Вторая часть была переправлена в Константинопольский Патриархат Армянской Апостольской Церкви, а третья часть, к сожалению, стала предметом грабежа турок. В письменных источниках сохра-

Նկար 1. Սկիհի ծածկոց Մալղարայից, պահվում է Ս. Էջմիածնի Ալեֆ եւ Մարի Մանուկյանների գանձատանը, տե՛ս՝ Սուրբ Էջմիածնի գանձերն աշխարհի թանգարաններում, կազմեց՝ Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը, Ս. Էջմիածին, 2008, էջ 77:

Նկար 2. Ռոդոսթոյի եկեղեցական գույքը Պլովդիվ տեղափոխած 13 արկղերից մեկը, պահվում է Պլովդիվի Սբ Գեւորգ եկեղեցում, https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/edirnevilayet/sandjakofrodosto/rodostoreligion/churches.html

нился список первой части, которая оказалась в Пловдиве. Среди предметов – нарамники, покровы потиров и алтарей, Евангелия, ручные кресты – всего около 50 наименований. 23-й пункт из этого списка – покров потира, который в настоящее время находится в музее-сокровищнице Св. Эчмиадзина имени Алека и Мари Манукянов. В 1922 году в Пловдив 13-ю сундуками была переправлена также утварь церквей Св. Креста, Св. Короля и Св. Спасителя города Родосто. В 1947 году семь из этих сундуков и 100 килограмм серебра были переправлены в Армению. Предположительно, вышеупомянутый покров потира тоже оказался в Армении именно в 1947 году. Не исключено, что сюда же были переправлены и другие церковные предметы из города Малгара, так как в Эчмиадзинском соборе чувствовалась нехватка церковной утвари.

SUMMARY

The city of Malkara, which is located in the Tekirdağ region of modern Turkey, was inhabited by Armenians who lived and worked there until the beginning of the 20th century. In 1922, the Armenian population was forced to leave Malkara. A big problem was the salvation of the treasures of St. Toros Church. There is no exact list of utensils of St. Toros Church, but we know that they were moved in parts. The first part was handed over to Keshan village, and then transferred to Plovdiv. The second part was transferred to the Armenian Patriarchate of Constantinople. The third part, unfortunately, was robbed by the Turks.

In written sources, only the list of treasures transported to Plovdiv has been preserved, which includes amices, table clothes, chalice veils, gospels, hand crosses, etc. – about 50 items in total. The 23rd item on this list is the chalice veil, which is now in Armenia, in the Alex and Marie Manoogian Treasury House Museum in Etchmiadzin.

In 1922, treasures of Rodosto were also transported to Plovdiv by 13 trunks. They were from the churches of Holy Cross, Holy King and St. Savior of Rodosto. They had survived in the Church of St. Gevorg in Plovdiv. Presumably, the treasures included also the chalice veil of Malkara. It is possible that other church items from Malkara were also transported to Armenia, since there was a shortage of church utensils in the Etchmiadzin Cathedral.